ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԵԽԱՆԻԶ

Նարինե Կարապետյան
ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության ավագ սպա, փոխգնդապետ

Զինված ընդհարումների վերլուծությունը վկայում է այն մասին, որ ընդհարման կողմերի վարքագծին բնորոշ են ավերածությունները, բռնությունները, մարդու իրավունքների և ազատությունների կոպիտ խախտումները միտումով, և չնայած միջազգային ու պետական մակարդակով իրավական բազան զգալիորեն կատարելագործվել է, այդուհանդերձ վերջին շրջանում աշխարհի տարբեր մասերում ծագած տարաբնույթ զինված ընդհարումների ժամանակ արձանագրվում են մարդու իրավունքների չափազանց մեծ ծավալների խախտումներ և հիմնարար ազատությունների սահմանափակումներ, իսկ ազգային իրավական համակարգերը միշտ չէ, որ կարողանում են կանխել զինվորական հանցագործությունները: Արդյունքում անպատժելիության մթնոլորտն ավելի է խստացնում ՄՄԻ-ի ոլորտում պետությունների կողմից ստանձնած պարտականությունների կատարման անհրաժեշտությունը:

Միջազգային-իրավական պատասխանատվության առաջացման համար հիմք է ծառայում պետության իրավախախտումը (միջազգային հակահիրավական արարքը):

Միջազգային իրավախախտումը միջազգային իրավունքի սուբյեկտի այն գործողությունը կամ անգործությունն է, որը խախտում է սահմանված միջազգային իրավունքի նորմերը և նյութական կամ ոչ նյութական բնույթի վնաս հասցնում միջազգային իրավունքի այլ սուբյեկտներին կամ միջազգային հանրությանը (օրինակ՝ ագրեսիայի ակտը, տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության ոտնձգությունը, պայմանագրային պարտավորություններից խուսափելը):

Միջազգային իրավանորմերի խախտումները հանգեցնում են պատասխանատվության: Ներկայումս կիրառվում են քաղաքական, տնտեսական և միջազգային քրեական պատասխանատվության տեսակները:

Քաղաքական պատասխանատվությունը արտահայտվում է սատիսֆակցիաների (բավարարումների) և սանկցիաների ձևով. սատիսֆակցիաները իրավազանց պետության կողմից ափսոսանք (զղջում) արտահայտել են: Սանկցիաները պետությունների հանդեպ ձեռնարկվող հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառելի են իրավախախտ պետությունների հանդեպ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից՝ ՄԱԿ-ի կանոնադրության 39, 41, 42-րդ հոդվածների համաձայն: Հարկադրանքի միջոցները լինում են ռազմական և ոչ ռազմական բնույթի, ինչպես օրինակ՝ տնտեսական կապերի խզումը, ՄԱԿ-ի կազմից հեռացնելը, որպես ՄԱԿ-ի անդամ պետության համար սահմանված իրավունքների և արտոնությունների կասեցումը (ՄԱԿ-ի կանոնադրության 41, 6, 5 -րդ հոդվածներ):

Սովորաբար միջազգային հանցագործությունները կատարելու վերաբերյալ որոշումները կայացվում են պետությունների ռազմաքաղաքական ղեկավարության կողմից, իսկ պատասխանատվության բեռը ընկնում է պետության և ժողովրդի վրա, ուստի այս առումով շատ կարևոր է մարդկության անվտանգության և խաղաղության դեմ ուղղված հանցագործությունների համար երկրի ղեկավարների և պաշտոնատար անձանց պատասխանատվության սահմանումը:

Այս խնդրի կարգավորման համար միջազգային մարդասիրական իրավունքով սահմանվել են պատասխանատվության երկու ձև՝ պետության պատասխանատվությունը և անհատի քրեական պատասխանատվությունը: Սակայն միջազգային հարաբերությունների կանոնների սահմանումը, դրանց կանոնակարգումը և նույնիսկ այդ կանոնների կատարմանն ուղղված պետությունների կողմից պարտավորությունների ստանձնումը դեռևս չեն նշանակում, որ դրանք չեն խախտվի կամ գործնականում կկիրառվեն՝ մասնավորապես իրավունքի իրացման այնպիսի անբարենպաստ պայմաններում, ինչպիսիք են տարաբնույթ զինված ընդհարումները:

Այս առումով շատ կարևոր է միջազգային իրավունքի դրույթները անշեղորեն և յուրաժամանակ կատարմանն ուղղված ոչ միայն ներպետական միջոցների ձեռնարկումը, այլ նաև միջազգային բնույթի հարկադրական, վերահսկողական և կանխարգելիչ կառուցակարգերի ստեղծումը:

XX-XXI դարերի սահմանագծում միջազգային հանրությունը հանգեց այն եզրակացության, որ անկախ միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) ստեղծումը և ՄՄԻ-ի պայմանագրային և սովորութային նորմերի ազգային իրավական համակարգ ներմուծելու (իմպլեմենտացիայի) գործընթացի միջազգային վերահսկողությունը կնպաստեն ստեղծված իրավիճակի լուծմանը:

ՄՄԻ-ի իմպլեմենտացիայի հիմնական նպատակը ՄՄԻ-ի նորմերի կատարումն ապահովելն է ինչպես պետությունների, այնպես էլ ֆիզիկական անձանց կողմից: Զինված ընդհարումների ժամանակ մարդու իրավունքների պաշտպանության ու իրացմանը առավելագույն նպաստող միջոց է նաև անձի քրեական պատասխանատվությունը, որը նախատեսված է ՄՄԻ-ի լուրջ խախտումների համար:

Ֆիզիկական անձանց կողմից ՄՄԻ-ի լուրջ խախտումների կանխմանն են ուղղված միջազգային կառուցակարգային միջոցները՝ միջազգային տրիբունալները և Հռոմի կանոնադրության (այսուհետ՝ նաև Կանոնադրություն) հիման վրա գործող միջազգային քրեական դատարանը (ՄՔԴ), որը գործում է այն դեպքերում, երբ ազգային դատական համակարգը բացակայում է, կամ դրանք չեն կարող իրականացնել իրենց գործառույթները:

Ֆիզիկական անձանց միջազգային քրեական պատասխանատվությունը հարաբերականորեն նոր երևույթ է միջազգային իրավական պրակտիկայում: Առաջին անգամ ֆիզիկական անձանց միջազգային քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով ստեղծվեցին Նյուրնբերգի, Տոկիոյի, Հարավսլավիայի և Ռուանդայի *ad hoc*[1] դատարանները, որոնք խթան հանդիսացան Միջազգային քրեական դատարանի ստեղծման համար:

Հետագայում ֆիզիկական անձանց համար նման պատասխանատվության առաջացման հնարավորությունները սահմանվեցին որոշ միջազգային պայմանագրե-

[1] Լատիներենից թարգմանաբար նշանակում է տվյալ դեպքի կամ տվյալ նպատակի համար: Սովորաբար կիրառվում է այն իմաստով, որ որոշումն ընդունվել է միայն կոնկրետ խնդրի լուծման համար և ենթակա չէ ընդհանրացման կամ հարմարեցման այլ նպատակների համար: https://en.wikipedia.org

րով, մասնավորապես՝ 1948 թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» Կոնվենցիայով, 1973 թ. «Ապարտեիդի հանցագործությունն արգելելու և պատժելու մասին» Կոնվենցիայով, 1998 թ. ընդունված ՄՔԴ Կանոնադրությամբ, ինչպես նաև նախկին Հարավսլավիայի ու Ռուանդայի հարցերով Միջազգային տրիբունալների կանոնադրություններով:

ՄՔԴ-ն պետությունների ինքնիշխանության ուժով և կամավորության հիման վրա ստեղծված միջազգային կառույց է, որը կոչված է սահմանված միջազգային ընթացակարգով խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված, այդ թվում նաև զինված ընդհարումների ժամանակ մարդու իրավունքների ու ազատությունների կոպիտ խախտումների համար զինվորական հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց քրեական պատասխանատվության ենթարկելուն:

Նշված հանցագործությունների համար ֆիզիկական անձը պատասխանատվության է ենթարկվում, եթե նրա հանցավոր արարքը կապված է պետության հանցավոր գործունեության հետ[1]:

Մշտական գործող Միջազգային քրեական դատարանի 1998թ. Հռոմում ընդունած Կանոնադրությունը (նաև՝ Հռոմի Ստատուտ. սահմանում է չորս տեսակի զինվորական հանցագործություններ, որոնց համար նախատեսվում է Միջազգային քրեական պատասխանատվություն: Դրանք են.

1. Ժնևյան կոնվենցիաների լուրջ խախտումները,
2. Զինված ընդհարումների ժամանակ պատերազմի օրենքների և սովորույթների այլ լուրջ խախտումները, I լրացուցիչ արձանագրությամբ նախատեսված առանձին լուրջ խախտումները և ժամանակակից ընդհարումների իրողությունը արտացոլող որոշ այլ արարքները,
3. 1949թ. Ժնևյան կոնվենցիաների համար ընդհանուր 3-րդ հոդվածով սահմանված լուրջ խախտումները,
4. միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների վերաբերյալ կիրառվող պատերազմի օրենքների և սովորույթների այլ լուրջ խախտումները, որոնց մեծամասնությունն արդեն արգելված է II լրացուցիչ արձանագրությամբ:

Ժամանակակից միջազգային տեսությունն ու պրակտիկան ելնում են նրանից, որ ֆիզիկական անձանց համար միջազգային քրեական պատասխանատվություն կարող է առաջանալ դատարանի դատավճռի հիման վրա և միայն կատարած հանցագործությունների համար, որոնց սպառիչ սահմանումը բովանդակում է համապատասխան Միջազգային դատական մարմնի Կանոնադրությունը: Այսինքն՝ բացառվում է միջազգային քրեական հետապնդումը այլ հանցագործությունների համար[2]:

Վերոգրյալի հաշվառմամբ կարելի եզրահանգել, որ ՄՄԻ-ի նորմերի լուրջ խախտումները կանխելու հարցում ՄՔԴ-ի կանոնավոր գործունեությունը չափազանց կարևոր է, սակայն միջազգային իմպլեմենտացիայի այս միջոցի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է Կանոնադրությունը վավերացնելու և դրա նորմերն իրացնելու պատրաստակամությամբ:

ՄՔԴ-ն կարևորագույն միջոց է միջազգային ծանր հանցագործություններ կատարած անձանց դատապարտելու և անպատժելիության մթնոլորտը վերացնելու

---

[1] Юридический портал 8.5 Международная уголовная отвественность физических и международных организации. www.oprave.Ru/?p=26683

[2] Տե՛ս **Буроменский М.В.** Международное право §8 международное уголовная ответственность физических лиц. www.booktext.ru

գործում: Դատարանը ոչ թե փոխարինում, այլ լրացնում է քրեական արդարադատության ազգային համակարգը: Դատարանին ընդդատյա են ներկայումս մարդկության պատմությանը հայտնի ամենադաժան և ծանր հանցագործությունները՝ ցեղասպանությունը, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, պատերազմական հանցագործությունները, ագրեսիայի հանցագործությունը:

ՄՔԴ կանոնադրությունը միջազգային պրակտիկայում մինչ օրս նմանը չունեցող փաստաթուղթ է, որը շոշափում է այդ մարմնի գործունեության իրականացմանն առնչվող նյութական, դատավարական, ընթացակարգային խնդիրները:

Կանոնադրությունն ընդունվել է 1998թ. հուլիսի 17-ին և ուժի մեջ է մտել 2002թ. հուլիսի 1-ին: 2015թ. փետրվարի դրությամբ այն ստորագրել է 139 և վավերացրել 123 պետություն[1]:

Թեև Կանոնադրությունը վավերացրած պետությունները ձեռք են բերել մեծ փորձ դրա դրույթներն ազգային օրենսդրություն ներմուծելու հարցում, այնուամենայնիվ փոխակերպման (իմպլեմենտացիայի) միասնական մոդել գոյություն չունի:

Պետք է ասել, որ Կանոնադրությունը վավերացրած երկրների մի մասը միջազգային իրավունքի փոխակերպումն իրականացնում է ներմուծման (ինկորպորացիայի), փոխակերպման (տրանսֆորմացիայի), ընդհանուր կամ մասնավոր հղմամբ, կամ էլ դրսևորվում է խառը մոտեցում[2]:

Յուրաքանչյուր պետություն ազատ է իմպլեմենտացիայի մոտեցումների ընտրության մեջ, եթե այն գործում է միջազգային պարտավորությունները բարեխղճորեն կատարելու նպատակով:

Ընդհանուր առմամբ Կանոնադրությունը բոլոր մասնակից պետությունների համար ստեղծում է միջազգային արարքների համընդհանուր քրեականացման մոդել ազգային քրեաիրավական համակարգերի համապատասխան մասերի միավորմամբ[3]:

Քանի որ Կանոնադրությամբ ամրագրված միջազգային հանցագործությունների ցանկը ամբողջական չէ, մի շարք երկրներ փոխակերպման գործընթացով ազգային օրենսդրությունը համալրեցին լրացուցիչ հանցակազմերով կամ ՄՄԻ-ի համապատասխան ակտերի հղումներով: Որպես Կանոնադրության փոխակերպման առավել հաջողակ օրինակ կարող է ծառայել Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը:

ԳՖՀ-ն Կանոնադրությունը վավերացնող 25-րդ պետությունն է: 2000թ. դեկտեմբերի 11-ից՝ վավերացումից հետո, Գերմանիան ակտիվորեն ընդգրկվեց Կանոնադրության դրույթների փոխակերպման գործընթացին: 2000-2002թթ. ընդունվեց վեց դաշնային օրենք, մասնավորապես՝ ԳՖՀ Հիմնական օրենքի փոփոխության մասին օրենքը, որը սահմանում է ԳՖՀ քաղաքացիներին ՄՔԴ-ին կամ ԵՄ-ի անդամ պետություններին հանձնելու հնարավորությունը՝ օրենքի գերակայության սկզբունքի պահպանման պայմանով, «ՄՔԴ-ի կանոնադրության իմպլեմենտացիայի մասին», «ՄՔԴ-ի հետ համագործակցության մասին» օրենքները: Բացի այդ՝ ՄՔԴ-ի արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատվության կանչելու նպատակով ԳՖԴ-ի քրեական օրենսդրության մեջ կատար-

---

[1] ՄՔԴ կանոնադրությունը վավերացրած վերջին պետությունը Պաղեստինն է՝ 2015թ.փետրվարի 2: https://ru.wikipedia.org/wiki

[2] Большой энциклопедический словарь. 2000: Տես նաև՝ www.ru.wikipedia.org

[3] Տե՛ս **Трикоз Е.Н.** Перспективы присоеденения РФ к Римскому Статуту международного уголовного суда//Журнал Российского права. 2007, № 12.С.133.

վեցին մի շարք փոփոխություններ, և 2002թ. հունիսի 26-ին ընդունվեց Միջազգային իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների օրենսգիրք: Այս յուրատեսակ միջազգային քրեական օրենսգիրքը բաղկացած է երկու՝ «Ընդհանուր դրույթներ» և «Միջազգային իրավունքի քրեորեն պատժելի խախտումները» մասերից: ԳՖՀ-ի գործող քրեական օրենսգիրքն օրենսդրի կողմից համալրվեց «միջազգային քրեական օրենսգիրք» կոչվող նոր բաժնով, որում ճիշտ այնպես, ինչպես Հռոմի Ստատուտի նորմերով ամրագրված են միջազգային երեք հանցագործությունների հանցակազմերը, դրանք են՝ ցեղասպանությունը, մարդկության դեմ հանցագործությունները, զինվորական հանցագործությունները, ինչպես նաև որոշված են ԳՂՀ-ի դատախազության և դատարանների կողմից այդ հանցագործությունները կատարած անձանց հետապնդման պայմանները[1]:

Նշված օրենսգիրքն իրավունքի տարբեր ոլորտների համալիր համակարգված միասնական օրենքի վառ օրինակ է հանդիսանում, որը հնարավորություն է տալիս պետությանը խաղաղության և մարդկության անվտանգությանն ուղղված հանցագործությունների դեմ պայքարին համագործակցելու հարցում միջազգային պարտավորությունները համարժեք կատարելու:

Այս առումով գերմանացի քրեագետները նշում են, որ Հռոմի Ստատուտը ՄՔԴ-ի գործունեության հիմքը լինելուց բացի, նաև ունիվերսալ քրեական օրենսգիրք է, քանի որ այն որակում է առանձնապես ծանր միջազգային հանցագործությունները և մանրամասն կարգավորում միջազգային իրավունքի անհատական քրեական պատասխանատվության հատկանիշները[2]:

Ավելորդ չի լինի նշել նաև, որ ՄՔԴ-ի կողմից հաստատված նոր տարբերակով ունիվերսալ իրավասության սկզբունքը, ըստ էության ազատված է որևէ սահմանափակումներից[3]:

Հայաստանը ՄՔԴ Կանոնադրությունը ստորագրել է 1999թ. հոկտեմբերի 1-ին, սակայն առ այսօր այն չի վավերացրել:

Կանոնադրության դրույթները Հայաստանի ազգային օրենսդրություն ներմուծելու համար պետք է լուծվի երեք հիմնական խնդիր. վերացվեն երկրի սահմանադրական նորմերի և ՄՔԴ կանոնադրության հնարավոր հակասությունները, համապատասխանեցվեն ազգային քրեական օրենսդրությանը, և ստեղծվի համապատասխան իրավական բազա ՄՔԴ-ի հետ արդյունավետ համագործակցության համար:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը: Սահմանադրական այս նորմից հետևում է, որ միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել, եթե դրանք հակասում են Սահմանադրությանը: Այդ իսկ պատճառով ՄՔԴ-ի կանոնադրության վավերացման վերը թվարկված խնդիրներից առաջնայինը Կանոնադրության սահմանադրական վերահսկողության հարցն է:

---

[1] Տե՛ս **Wilkitzki P.** The German law on cooperation with the ICC // International Criminal Law Review.2002. №2. P.195-212.

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **Ледях И.А.** Универсальная юрисдикция как принцип уголовного преследования и наказания в международном уголовном праве//Юрист – международник. 2008. №2.

Կանոնադրության վավերացման գործընթացում իրավական տեսանկյունից ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Հայաստանը, ինչպես և պայմանագրի այլ կողմերը Կանոնադրության բովանդակության վերաբերյալ վերապահումներ անել չեն կարող, քանի որ վերապահում անելը Կանոնադրությամբ արգելված է: Սակայն Հայաստանը Կանոնադրությանը միացել է հայտարարությամբ, քանի որ փաստաթղթի 124-րդ հոդվածը մասնակից պետություններին թույլ է տալիս հայտարարել, որ տվյալ պետության համար Կանոնադրության ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթ տարվա ընթացքում, ՄՔԴ-ի իրավասությունը չի ընդունվում Կանոնադրության 8-րդ հոդվածով սահմանված հանցագործությունների կատեգորիաների նկատմամբ:

Բացի այդ՝ փորձը ցույց է տալիս, որ Սահմանադրական դատարանի կողմից երկկողմ միջազգային պայմանագրերի դրույթների ՀՀ Սահմանադրությանն անհամապատասխանություն հայտնաբերելու բոլոր դեպքերում էլ այդ պայմանագրերի հետագա վավերացման հարցը լուծվել է պայմանագրերի համապատասխան դրույթներում փոփոխություններ կատարելու և դրանց դրույթները ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու միջոցով, իսկ ահա միջազգային բազմակողմ պայմանագրերի պարագայում, տվյալ դեպքում՝ ՄՔԴ-ի կանոնադրության և ՀՀ Սահմանադրության միջև հակասության(ների) առկայության պարագայում դրա(նց) հարթեցման խնդրի կարգավորումը բոլորովին այլ է:

ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2004թ. օգոստոսի 13-ին կայացրած որոշման համաձայն՝ ՄՔԴ-ի կանոնադրության նախաբանի 10-րդ մասը և 1-ին հոդվածը առ այն, որ ՄՔԴ-ն լրացնում է ներպետական քրեական իրավազորության մարմինները, չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության (1995թ. խմբագրությամբ) 91-րդ և 92-րդ հոդվածներին: Ինչպես նաև ՄՔԴ-ի կանոնադրության 105 հոդվածի դրույթներով ստանձնած պարտավորությունները, որոնցով բացառվում է դատապարտված անձանց ներպետական ընթացակարգով ներման իրավունքի և համաներման հնարավորության իրացումը, չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 17 կետի և 81-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

Հետևաբար ՄՔԴ-ի կանոնադրության և ՀՀ Սահմանադրության վերոնշյալ հակասությունների պարագայում Կանոնադրության վավերացումը հնարավոր կլինի միայն ՀՀ Սահմանադրության մեջ որոշակի փոփոխություններ կատարելու պարագայում:

Վկայակոչված որոշումից ի վեր ՀՀ Սահմանադրությունը փոփոխվել է 2005թ. և 2015թ., ու թեև իր որոշմամբ Սահմանադրական դատարանը հնարավոր է համարում ՀՀ Սահմանադրության այնպիսի փոփոխություն կամ լրացում, որը կճանաչի ՄՔԴ-ի Կանոնադրությամբ նախատեսված պարտավորությունները[1], այդուհանդերձ պետք է արձանագրել, որ ցայսօր կատարված սահմանադրական բարեփոխումները որևէ կերպ չեն անդրադարձել ՀՀ Սահմանադրության այն հոդվածներին, որոնք հակասում են ՄՔԴ-ի նշված հոդվածների դրույթներին, հետևապես անհնարին են դարձնում ՄՄԻ-ի իրացմանն ուղղված ամենագործուն միջազգային միջոցներից մե-

[1] ՀՀ Սահմանադրական դատարանի 2004թ. օգոստոսի 13-ի որոշում՝ «Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները, ՀՀ Սահմանադրական դատարանը՝ ելնելով նաև միջազգային իրավակիրառ պրակտիկայից, հնարավոր է համարում ՀՀ Սահմանադրության այնպիսի փոփոխություն կամ լրացում, որը կճանաչի ՄՔԴ Կանոնադրությամբ նախատեսված պարտավորությունները, կամ այդ Դատարանի իրավազորությունը՝որպես ներպետական դատական համակարգը լրացնող մարմին»:

կի՝ ՄՔԴ-ի գործողությունը ՀՀ տարածքում: Կատարված բարեփոխումների արդյունքում ՄՔԴ-ի կանոնադրության վավերացումը խոչընդոտող սահմանադրական դրույթների բովանդակությունը, ըստ էության, չի փոփոխվել, և գործող Սահմանադրության 163, 164, 135, 117-րդ հոդվածներով սահմանված նորմերը խոչընդոտում են ՄՔԴ-ի կանոնադրության վավերացմանը:

Մինչդեռ ՄՄԻ-ի շատ դրույթներ հստակ պահանջում են մարդասիրական իրավունքի կիրառման ուղղությամբ ազգային մակարդակով միջոցների ձեռնարկում, ինչը լիովին բխում է Վիեննայի կոնվենցիայի 26-րդ հոդվածի պահանջներից, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր գործող պայմանագիր պարտադիր է դրա մասնակիցների համար և պետք է նրանց կողմից բարեխղճորեն կատարվի»:

Նշված դրույթը համապատասխանում է զինված ընդհարումների մարդասիրական պաշտպանության հատուկ պահանջներին, որոնց կատարումը դժվար է պատկերացնել առանց միջազգային և ազգային մակարդակներով հստակ սահմանված օրենսդրական և կազմակերպական միջոցներ ձեռնարկելու:

Ժնևյան կոնվենցիաների և I լրացուցիչ արձանագրության հնարավոր խախտումների համար պատժամիջոցներ նախատեսող ՄՄԻ-ի նորմերի պրակտիկ նշանակությունը այս պահի դրությամբ դժվար է գնահատել: Փորձը ցույց է տալիս, որ այդ նորմերի կիրառումը գործնականում ունի, մեղմ ասած, համեստ դերակատարություն միջազգային հարաբերություններում, մասնավորապես մարդասիրական իրավունքի կարգավորման ոլորտում: Դա կարող է պայմանավորված լինել տարբեր գործոններով, ինչպես օրինակ՝ թշնամու հանդեպ դրսևորված «ավելորդ ատելության» քննադատության հետ կապված հոգեբանական խնդիրներով, այն հանգամանքով, որ հաճախ իշխանություններն իրենք են պատասխանատու թույլ տրված խախտումների համար: Ավելի հաճախ կոպիտ խախտումները պայմանավորված են ՄՄԻ-ի մասին գիտելիքների ոչ պատշաճ տարածմամբ, կամ էլ այն փաստով, որ զինված ընդհարումների պայմաններում դատական և քաղաքական իշխանությունների բաժանումը չի պահպանվում: ՄՄԻ-ի կոպիտ խախտումների պատճառներից մեկը կարող է լինել նաև պարտադիր ընդդատության և վերպետական հարկադրանքի միջոցների բացակայությունը[1]:

Հռոմի Կանոնադրությամբ ամրագրված է ՄՄԻ-ի դրույթների զգալի մասը, քանի որ միջազգային իրավունքի զարգացումների այս փուլում ՄՄԻ-ի դրույթների փոխակերպումն օրակարգի կարևորագույն խնդիրներից է: Գործընթացի այս տեսակ կարևորությունը պայմանավորված է նրանով, որ ՄՄԻ-ի փոխակերպումն ազգային իրավական համակարգ թույլ կտա առավել արդյունավետ իրականացնել մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների իրացումը զինված ընդհարումների ժամանակ, ուստի այդ ուղղությամբ ձեռնարկված ցանկացած քայլ կհանդիսանա միջազգային հարաբերություններում փոխադարձ վստահության ամրապնդմանը նպաստող կարևոր միջոց:

Վերոգրյալից հետևում է, որ ՄՄԻ-ի նորմերի իրացումը ենթադրում է համալիր միջոցների ձեռնարկում, ընդ որում յուրաքանչյուր պետություն ՄՄԻ-ի իրացման և կատարման հարցում ունի իր առաջնությունները: Այս առումով Հայաստանի համար առավելապես կարևոր նշանակություն ունեն ՄՄԻ-ի փոխակերպման գործընթացը վերահսկող պետական առանձին մարմնի ստեղծումը, կազմակերպական և

[1] Տե՛ս **Батырь В.А.** Имплементация норм международного гуманитарного права в военном законодательстве РФ/ Автореферат дис.канд.юрид. наук М.: Военный ун-т,1999.С.18

լուսավորչական բնույթի միջոցների կատարելագործումը, որն ուղղակիորեն կնպաստի ՄՄԻ-ի մասին գիտելիքների տարածմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ՄՔԴ-ի գործողության ապահովումը, ինչը հնարավոր կլինի միայն Կանոնադրությունը վավերացնելու նպատակով ներպետական օրենսդրությունը փոփոխելու և լրամշակելու ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու պարագայում:

ՄՄԻ-ի իմպլեմենտացիայի միջոցները ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական մակարդակներում ուղղակիորեն արտացոլում են ոչ միայն պետության կողմից նշված ոլորտի միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման մակարդակը, այլև միջազգային իրավունքի նախանշումները կատարելու հարցում տվյալ պետության պատրաստակամությունն առհասարակ:

МЕЖДУНАРОДНЫЙ УГОЛОВНЫЙ СУД КАК МЕЖДУНАРОДНЫЙ ИНСТИТУЦИОНАЛЬНЫЙ МЕХАНИЗМ ПРЕДОТВРАЩЕНИЯ НАРУШЕНИЙ ГУМАНИТАРНОГО ПРАВА

Нарине Карапетян
Соискатель кафедры европейского и международного права ЕГУ,
старший офицер Юридического управления МО РА, подполковник

Международный уголовный суд (МУС) – международный институциональный механизм по предотвращению серьезных нарушений МГП отдельными лицами. Исходя из этой имплементация Статута Международного уголовного суда, он играет важную роль в предотвращении серьезных нарушений прав человека во время вооруженных конфликтов.

Римский Статут МУС в значительной степени регламентирует положения международного гуманитарного права, поскольку на данном этапе развития международного права имплементация положений МГП является наиболее важным вопросом повестки дня. Важность процесса обусловлена тем, что внедрение МГП в национальную правовую систему позволит более эффективно осуществлять и защитить основные права человека во время вооруженных конфликтов. Исходя из этого, любое действие в указанном направлении будет способствовать укреплению взаимного доверия в международных отношениях.

В качестве примера для изучения автор сослался на процесс имплементации МУС в Федеративой Республике Германии. Предметом изучения и анализа стали также правовые нормы национального законодательства препятствующие ратификации Статута МУС в Республике Армения.

THE INTERNATIONAL CRIMINAL COURT AS AN INTERNATIONAL INSTITUTIONAL MECHANISM OF PREVENTING VIOLATIONS OF HUMANITARIAN LAW

Narine Karapetyan
Applicant of YSU Chair of European and International Law,
senior officer of the Legal Department of the MOD of the RA
Lieutenant Colonel

The International Criminal Court (ICC), international institutional means to prevent serious violations of international humanitarian law by individuals. Based on this implementation of the Statute of the International Criminal Court plays an important role in the prevention, of serious human rights violations during the armed conflict.

The Rome Statute of the ICC to a large extent regulated by IHL, since at this stage of implementation of international law, IHL is the most important issue on the agenda. The importance of the process due to the fact that the implementation of IHL in the national legal system will more effectively implement and protect fundamental human rights in armed conflicts. On this basis, any action in this direction will contribute to the strengthening of mutual trust in international relations.

As an example, for the study of the author referred to the ICC the process of implementation in Federativoy Republic of Germany. As well as the subject of study and analysis of the legal norms of national legislation impeding the ratification of the ICC Statute in the Republic of Armenia.

Բանալի բառեր – *Միջազգային քրեական դատարան, ՄՔԴ կանոնադրություն, Հռոմի Ստատուտ, զինվորական հանցագործություն, ՄՄԻ իմպլեմենտացիա, զինված ընդհարում, մարդու իրավունքներ*
Ключевые слова: *Международный уголовный суд, Статут МУС, военные преступления, Римский статут, имплементация МГП, вооруженный конфликт, права человека.*
Key words: *International Criminal Court, the Statute of the ICC, the Rome Statute, a war crime, the implementation of IHL, armed conflict, human rights.*